ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. *Անունը, Ազգանունը*

   Վահրամ Մկրտչյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

   Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան),

   2018 թվականի հունվարի 29-31-ը:

4. *Հրավիրող կողմը*

   Իրանի Իսլամական Հանրապետության գիտության հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարություն

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը*)

   Մասնակցություն հայ-իրանական համատեղ կոմիտեի անդրանիկ նիստին:

6. *Քննարկված թեմաները*

   - Երկու պետությունների բարձրագույն կրթության և գիտության (մասնավորապես նանոտեխնոլոգիաների) ոլորտում համատեղ նախագծերի իրականացում;
   - Բուհական և գիտահետազոտական հաստատությունների միջև համագործակցության ուղիներ:
   - Բուհերի ավարտական վկայականների փոխճանաչում՝ կարճաժամկետ ծրագրերի իրականացմամբ, ինչպես նաև փոխադարձ այցելությունների և համատեղ գիտական համաժողովների կազմակերպում:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

ՀՀ պատվիրակությունը հանդիպում է ունեցել նաև ԻԻՀ գիտության, հետազոտության և տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Մոջտաբա Շարիաթի Նիասարի և Գիտության, հետազոտության և տեխնոլոգիաների նախարարի միջազգային համագործակցության գծով տեղակալ Սալար Ամոլիի հետ, որի ընթացքում երկու կողմերը հայտնեցին իրենց պատրաստակամության մասին ամրապնդելու և ընդլայնելու համագործակցությունը կրթության և գիտության ոլորտում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նանոտեխ-նոլոգիաների ոլորտում համագործակցության, բուհերի ավարտական վկայականների փոխճանաչման և կարճաժամկետ ծրագրերի իրականացման առումով:

Կազմակերպվել են նաև հայկական պատվիրակության հանդիպումներ Առողջապահության և բժշկական կրթության նախարարության կրթության գծով փոխնախարար Բագեր Լարիջանի և իր տեղակալ Համիդ Ակբարի հետ, որի ընթացքում քննարկվեցին բժշկական կրթության ոլորտում համագործակցության՝ հատկապես կլինիկական օրդինատուրայի համատեղ կրթական ծրագրերի իրականացման հնարավորության հարցը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև կրթության ոլորտում համագործակցության ուղղություններն ու մեթոդները, կրթության ոլորտի նոր մարտահրավերները: Ներկայացվել են առաջարկություններ երկու երկրների կրթական համակարգերի առկա վիճակի և զարգացման միտումների մասին:

Իրանական կողմը առաջարկեց Ուրմիա համալսարանը դիտել որպես Հայաստանի Հանրապետության հետ բարձրագույն կրթության և գիտության ոլորտում համագործակցության աշխատանքները համակարգող ազգային կենտրոն:

Հայ-իրանական համատեղ կոմիտեի անդրանիկ նիստի արձանագրությունը կողմերը կհամադրեն և կստորագրեն աշխատանքային կարգով:

8. *Գործուղվողը*

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Վահրամ Մկրտչյան

9. *Ստորագրությունը, ամսաթիվը*

Վահրամ Մկրտչյան

13/02/2018